

Գռք Մոլվախյան

ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի ասպիրանտ

**ՊԵՏԱԿԱՆ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Այն պետություններում, որտեղ հնարավոր է ապահովել հասարակական ժամանակակից պահանջներին համապատասխան զարգացում, տնտեսական գործունեությունը պլանավորելիս ձգտում են խուսափել բնական հավասարակշռության խախտումներից: Գործարարները բացասական տնտեսական հետևանքների պարտադրանքով հնարավորինս կանխում են շրջակա միջավայրի վրա ազդող վնասաբեր գործողությունները: Բնական ռեսուրսների արդյունավետ օգտագործման նշված ուղին հնարավորություն է բնօրինակում յուրաքանչյուր տնտեսական գործունեություն պլանավորելիս անպայման հաշվի առնել ազդեցությունը շրջակա միջավայրի, մարդկանց առողջության, սոցիալ-տնտեսական բնականոն զարգացման վրա և նախապես վնասագերծել, կանխել զգալի ազդեցությունները՝ բացառելով նաև բնական հավասարակշռության խախտումները: Այս ամենն իրականացվում է մի շարք իրավական մեխանիզմների հետևողական կիրառմամբ, այդ թվում նաև նախատեսվող գործունեության արդյունավետ էկոլոգիական գնահատման անցկացմամբ:

Ձևավորվելով ԱՄՆ-ում, այնուհետև տարածվելով Արևմտյան Եվրոպայում՝ հատկապես Եվրոպական խորհրդի 1985 թվականի «Հանրային և մասնավոր նախագծերի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած ազդեցության գնահատման մասին» դիրեկտիվի ընդունումից հետո¹, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը (այսուհետ՝ ՇՄԱԳ) միջավայրի պահպանությունն ու բնական ռեսուրսների ողջամիտ օգտագործումն ապահովող հիմնական մեխանիզմներից է:

Օրենսդրական կարգավորման հիմքերը

Չնայած գոյություն ունեցող իրավական անորոշություններին և հակասություններին՝ անհերքելի է, որ բնական ռեսուրսների ողջամիտ օգ-

¹ Տե՛ս John Glasson, Riki Therivel, Andrew Chadwi. Introduction to environmental impact assessment. 3rd edition. Published by Routledge, New York, 2005, էջ 3:

տագործման նպատակով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ ևս անցկացվում է «կարմիր գիծ», որի այս կողմում համեմատաբար անվնաս նախաձեռնությունն է, այն կողմում՝ բնապահպանական, սոցիալ-տնտեսական կորուստները: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ այդ գիծն անցկացվում է առաջին հերթին շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության (այսուհետ՝ ՇՄԱՓ) վերաբերյալ իրավական ակտերով. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն¹, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենք² (այսուհետ՝ ՇՄԱՓ-ի մասին օրենք), «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն իրականացնող լիազորված պետական մարմնի մասին» ՀՀ կառավարության N 345 որոշում³, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության ենթակա նախատեսվող գործունեությունների սահմանային չափերի մասին» ՀՀ կառավարության N 193 որոշում⁴, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասնագիտական իրավասության հավաստագիր տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության N 386 որոշում⁵, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը վերանայելու կամ չեղյալ հայտարարելու կարգը, պայմանները, ժամկետները և արարողակարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության N 701-Ն որոշում⁶, ««Բնապահպանական փորձաքննություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին» ՀՀ կառավարության 1846-Ն որոշում⁷: ՀՀ 1997 թ. վավերացրել է ՄԱԿ-ի ԵՏՀ «Անդրսահմանային համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մասին» կոնվենցիան (Էսպո, 1991 թ.), 2011 թ.՝ նշյալ կոնվենցիայի «Ռազմավարական էկոլոգիական գնահատման մասին» Կիևի արձանագրությունը, ինչպես նաև ՄԱԿ-ի ԵՏՀ «Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, ո-

¹ Ընդունվել է ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ թողարկում, Հոդ. 1426:

² Ընդունվել է 20.11.1995 թ., ուժի մեջ է մտել 14.12.1995 թ., ՀԱԺՏ 1995/9:

³ Ընդունվել է 30.10.1996 թ., ուժի մեջ է մտել 30.10.1996 թ., www.arlis.am:

⁴ Ընդունվել է 30.03.1999 թ., ուժի մեջ է մտել 25.04.1999 թ., ՀՀՊՏ 1999.04.15/9(75):

⁵ Ընդունվել է 20.12.1996 թ., ուժի մեջ է մտել 20.12.1996 թ., www.arlis.am:

⁶ Ընդունվել է 08.05.2003 թ., ուժի մեջ է մտել 12.07.2003 թ., ՀՀՊՏ 2003.07.02/35(270), Հոդ.623:

⁷ Ընդունվել է 21.11.2002 թ., ուժի մեջ է մտել 19.12.2002 թ., ՀՀՊՏ 2002.12.18/56(231), Հոդ.1304:

րոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիան¹ (Օրինու, 2001 թ.): Գործընկերության և համագործակցության համաձայնագրի 43-րդ հոդվածում («Օրենսդրական համագործակցություն») նախատեսված օրենսդրության մոտարկման ոլորտների մեջ ներառվում է նաև շրջակա միջավայրի պահպանությունը, ուստի ազգային օրենսդրությունը կատարելագործելիս պետք է հաշվի առնել նաև Եվրոպական խորհրդի՝ 1985թ. վերոգրյալ դիրեկտիվի (85/337/EEC) ամրագրած սկզբունքները:

ՇՄԱՓ գործընթացի իրավական կարգավորման առաջնային հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում.

ՇՄԱԳ և ՇՄԱՓ գործընթացների փոխհարաբերակցության ճշգրտումը՝ որպես օրենսդրական կարգավորման անհրաժեշտ ելակետ: Հայաստանի Հանրապետությունում ՇՄԱԳ գործընթացի հետ մեկտեղ գործում է նաև պետական էկոլոգիական փորձաքննության համակարգը: Ընդ որում, օրենսդրությամբ հիմնականում կարգավորվում են պետական փորձաքննության հարաբերությունները, որոնք պարունակում են ՇՄԱԳ ինստիտուտի որոշ տարրեր: Կարգավորման այսպիսի մոդել գոյություն ունի Արևելյան Եվրոպայի և Ասիայի մի շարք պետություններում²:

ՇՄԱԳ և ՇՄԱՓ հասկացությունների՝ գիտական աղբյուրներում և միջազգային պայմանագրերում գոյություն ունեցող բնորոշումները միմյանցից էականորեն չեն տարբերվում: Օրինակ՝ Էսպո կոնվենցիայի 1-ին հոդվածի ՇՄԱԳ շրջանակային բնորոշման համաձայն՝ դա նախատեսվող գործունեության՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության գնահատման ազգային ընթացակարգ է: Մեկ այլ՝ գիտական բնորոշմամբ՝ էկոլոգիական փորձաքննությունը նախատեսվող գործունեության՝ էկոլոգիական օրենսդրության պահանջներին համապատասխանության որոշումն է³:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը գործունեություն է, որն ուղղված է շրջակա միջավայրի (այդ թվում՝ մարդու առող-

¹Տե՛ս Ա. Իսկոյան, Ռ. Դավթյան, Բնապահպանական համաձայնագրեր, օրենքներ, ծրագրեր: Եր., 2004 թ., էջ 9:

² Տե՛ս Օ.Մ. Черп и др, Экологическая оценка и экологическая экспертиза., М., 2001, էջ 16-17:

³Տե՛ս Экологическое право. Под. ред. С.А. Боголюбова., М., 2010, էջ 191:

ջության) վրա նախատեսվող գործունեության և պլանների հնարավոր ուղղակի և/կամ անուղղակի ազդեցությունների բնույթի ու աստիճանի որոշմանը և դրանցով պայմանավորված տնտեսական, սոցիալական, էկոլոգիական հետևանքների բացահայտմանը, ինչպես նաև անվերադարձ ազդեցությունների կանխարգելմանը, բարձր և զգալի ազդեցությունների բացառմանը կամ նվազեցմանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական էկոլոգիական փորձաքննությունը պետական լիազոր մարմնի գործառույթ է՝ ուղղված էկոլոգիական օրենսդրության դրույթներին՝ նախատեսվող գործունեության և պլանների համապատասխանության որոշմանը և փորձաքննական եզրակացության տրամադրմանը: Այս երկու բնորոշումների համեմատությունից հետևում է, որ ՇՄԱԳ-ը գործունեություն է՝ ուղղված ազդեցությունների կանխարգելմանը, իսկ ՇՄԱՓ-ը կառավարման գործառույթ¹ է՝ ուղղված նախատեսվող գործունեության և պլանների՝ օրենսդրությանը համապատասխանության որոշմանը: Այս երկու ինստիտուտների փոխհարաբերակցության առումով անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն, որ պետական էկոլոգիական փորձաքննությունն անցկացվում է ՇՄԱԳ նախագծի հիման վրա, և տրամադրվող փորձաքննական եզրակացությունը կարող է նաև ճշգրտումներ կատարել ՇՄԱԳ փաստաթղթերում ազդեցությունների վերաբերյալ տրվող գնահատումների և վերլուծությունների մեջ:

Օրենսդրական կարգավորման կատարելագործման նախաձեռնություններ: Առնվազն տասը տարի է՝ ՀՀ բնապահպանության նախարարությունը փորձում է կատարելագործել ՇՄԱԳ համակարգը: Նախատեսվող որոշակի գործունեության, անդրսահմանային ազդեցություն ունեցող գործունեության (ՇՄԱԳ ընթացակարգ) ու պլանների, ծրագրերի և քաղաքականության (Ռ-ԷԳ ընթացակարգ) ՇՄԱԳ համակարգերի տարբերակված (դիֆերենցացված) ու միասնականացված (ինտեգրացված) իրավական կարգավորման խնդրի լուծումն այդքան էլ բարդ չէ հատկապես ՀՀ միջազգային պայմանագրերի բավականաչափ հստակ պահանջների պայմաններում: Այս պայմանագրերի որոշ դրույթների ի-

¹ ՀՀ Կառավարության 1996 թվականի հոկտեմբերի 30-ի N 345 որոշմամբ ՇՄԱՓ անցկացման լիազորված մարմին է ճանաչվել ՀՀ բնապահպանության նախարարությունը (որոշման մեջ պահպանվել է նախարարության նախկին անվանումը՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի նախարարություն):

րականացումը պահանջում է համապատասխան փոփոխությունների կատարում ՇՄԱՓ-ի մասին օրենքում՝ չձանրաբեռնելով տեքստը նշված պայմանագրերի այնպիսի դրույթներով, որոնք հնարավոր է կիրառել ուղղակիորեն: Այս պատճառով անընդունելի ենք համարում Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության մշակած «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքի» նախագծում առկա այն մոտեցումը, երբ բառացիորեն, չհամակարգված ձևով կրկնվում են Էսպո կոնվենցիայի դրույթները: Ընդ որում, Նախագծի որոշ դրույթներ ակնհայտորեն չեն անհամապատասխանում ՀՀ միջազգային պայմանագրերի պահանջների զգալի մասին:

Հասարակության մասնակցության արդյունավետ մեխանիզմների ներդրում ՇՄԱՓ-ը այն հիմնական գործընթացն է, որ ՀՀ-ում ապահովում է հասարակության մասնակցությունը կառավարչական որոշումների ընդունմանը:

Քաղաքակիրթ հասարակություններում տարբեր շահերով օժտված խմբերի ներգրավումը նախատեսվող գործունեության պլանավորման փուլում հնարավորություն է ընձեռում լուծելու պետական կառավարման մարմինների, գործարար ոլորտի և հասարակության միջև առաջացած հակասությունը (կոնֆլիկտը)¹: Աշխատանքների նախագծման և իրականացման ընթացքում հասարակության ներգրավվածության շնորհիվ հնարավոր է լինում վերանայել պետական իշխանության և շուկայի կարգավորիչ ազդեցության դերը²: Ժամանակակից սոցիալական կապերի բարդությունը պետությունից պահանջում է շահագրգիռ այլ խմբերի ներգրավել կառավարչական որոշումների ընդունման գործընթացին, քանի որ ձևավորված նոր հարթությունները պահանջում են գործող այլ անձանց մասնակցություն³:

¹ Տե՛ս Iain Docherty, Robina Goodlad and Ronan Paddison "Civic Culture, Community and Citizen Participation in Contrasting Neighborhoods ", Urban Studies, Vol. 38, No. 12, 2001, էջ 2244-2245:

² Տե՛ս Luis F. Beltrán Morales, Felipe García-Rodríguez, Daniel LLuch Cota, German Ponce Dı́az and Victor Sevilla Unda, "Economic Development, Environmental Conflicts and Citizen Participation in Latin America". Proceedings of world academy of science, engineering and technology, Volume 22, 2007, էջ 577:

³ Marilyn Taylor "Community Participation in the Real World: Opportunities and Pitfalls in New Governance Spaces", Urban Studies, Vol. 44, No. 2, 2007, էջ 297:

Սակայն գործնական ոլորտի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Հայաստանում ՇՄԱՓ գործընթացը գոյություն ունեցող կոնֆլիկտը լուծելու փոխարեն խորացնում է այն: Բնական ռեսուրսների պետական կառավարման հարաբերությունների ներկայիս բարդությունը (հատկապես շահերի հակադրության առումով) խոչընդոտում է հասարակայնության ներգրավվածությանը ինչպես որոշման ընդունման, այնպես էլ դրա իրականացման փուլում: Այս ամենին հավելենք նաև, որ հասարակության իրազեկվածության ցածր մակարդակը նվազեցնում է նրա մասնակցության արդյունավետությունը կամ նրան դարձնում է գործիք շահագրգիռ այլ խմբերի ձեռքում, ինչը, իհարկե, չի կարող կառավարչական որոշումների ընդունմանը նրան մասնակից չդարձնելու պատճառ հանդիսանալ:

ՀՀ-ում հասարակության արդյունավետ մասնակցության ապահովման օրենսդրական կարգավորման և գործնական ոլորտի կատարելագործման վերաբերյալ առաջարկներ ներկայացվել են մաս Օրինակի կոմպենցիայի համապատասխանության կոմիտեի՝ 2010 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունած եզրակցություններում, որը հաստատվել է Կոնվենցիայի կողմերի չորրորդ հանդիպմանը: Համապատասխանության կոմիտեն Հայաստանի Հանրապետության ուշադրությունն է հրավիրում հասարակության մասնակցության ընթացակարգերի կատարելագործման հետևյալ ուղղությունների վրա՝ 1. հասարակության ներգրավվածության ապահովում որոշումների ընդունման վաղ փուլում և ողջամիտ ժամկետի սահմանում առաջարկությունների ու դիտողությունների ներկայացման համար, 2. հասարակական լսումների կազմակերպիչներից յուրաքանչյուրի պարտականությունների հստակեցում, 3. ընդունված որոշման մասին հասարակության արագ տեղեկացում, օրինակ՝ լիազորված մարմնի համացանցային կայքի միջոցով:

ՇՄԱՓ-ի մասին ՀՀ օրենքի համապատասխան հոդվածներով պահանջվում է կազմակերպել երեք հանրային լսում՝

1. նախաձեռնության ծանուցման վերաբերյալ (6-րդ հոդված, 4-րդ և 5-րդ մասեր),
2. ՇՄԱԳ փաստաթղթերի վերաբերյալ (8-րդ հոդված, 2-րդ մաս),
3. անկախ փորձագետների մասնագիտական եզրակացության, շահագրգիռ կողմերի կարծիքների ու փորձագիտական եզրակացության նախագծի վերաբերյալ (10-րդ հոդված):

Հասարակության մասնակցության իրավական կարգավորման վերլուծությունը ցույց է տալիս, որ բացակայում են գործընթացի վերաբերյալ հասարակայնությանը տեղեկատվությամբ ապահովելու հստակ մոտեցումներ և մեխանիզմներ, մասնավորապես՝ տեղեկատվության տրամադրման միջոցներ, կարգ, ժամկետներ և տեղեկատվության բովանդակություն (Օրիուսի կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի Հայաստանի Հանրապետության վերաբերյալ ACCC/C/2009/43 գործով եզրակացությունների և առաջարկություններ (2011 թ.), 54-րդ կետ): Տարանջատված չեն պետական լիազոր մարմնի, համայնքի ղեկավարի և նախաձեռնողի լիազորությունները հասարակական լուսմների կազմակերպման գործում, ինչպես նաև հստակեցված չեն հասարակական կարծիքը հաշվի առնելու իրավական հիմքերը: Կարծում ենք՝ հասարակական լուսմների կազմակերպման գործընթացի հետ կապված որևէ պարտականություն չպետք է դրվի նախաձեռնողի կամ համայնքի ղեկավարի վրա, քանի որ հասարակական լուսմներն իրականացվում են պետական կառավարման մարմնի գործառույթի շրջանակներում:

Փորձաքննական եզրակացության իրավական կարգավիճակի հստակեցում:

ՇՄՄՓ ինստիտուտի խնդրահարույց հարցերից է նաև փորձաքննական եզրակացության իրավական կարգավիճակի հստակեցումը վարչական մարմինների կողմից ընդունվող ակտերի համակարգում: Ըստ ՇՄՄՓ-ի մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ լիազորված մարմինը համապատասխան լուսմներից հետո՝ 20-օրյա ժամկետում, որոշում է կայացնում մասնագիտական եզրակացության և հասարակական քննարկումների հիման վրա եզրակացություն տալու վերաբերյալ: Այդ եզրակացությունները նախկինում հաստատում էր Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարը, ով Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասագիտական իրավասության հավաստագիր տվող և շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացությունը հաստատող հանձնաժողովի նախագահն էր, իսկ ներկայումս՝ «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի փոխտնօրենը: Թե ինչպիսի իրավական ակտ է փորձաքննական եզրակացությունը, առաջնային հարց է ոչ միայն փորձաքննական եզրակացություն տրամադրողի, այլ նաև ՇՄՄՓ գործընթացում ներգրավված այլ սուբյեկտների համար: Ընդ որում, այս ընթացակարգի միջոցով է, որ հասարակայնությանը հնարավորություն է ընձեռվում իրացնելու իր մասնակ-

ցության իրավունքը, իսկ արդյունքների հետ համաձայն չլինելու պարագայում վարչական կամ դատական կարգով վիճարկելու ոչ թե պետական մարմնի գործողությունը, այլ փորձաքննական եզրակացությունը՝ որպես ակտ:

Հայաստանի Հանրապետությունում գործառոջ վարչարարության համեմատաբար կատարելագործված իրավական հիմքերի պայմաններում փորձաքննական եզրակացության իրավական կարգավիճակի անորոշությունը կարելի է վերացնել՝ հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի¹ (այսուհետ՝ ՎՀՎՎ-ի մասին օրենք) դրույթները:

Փորձաքննական եզրակացության բովանդակության, ՇՄԱՓ-ի մասին ՀՀ օրենքի և ՎՀՎՎ-ի մասին օրենքի դրույթների համադրությունից հետևում է.

1. Փորձաքննական եզրակացությունը նախձեռնողի նախատեսվող գործունեության իրավունքը ճանաչող իրավաբանական փաստերից մեկն է:

Փորձաքննական եզրակացությունը այնպիսի անհատական իրավական ակտ է (վարչական ակտը, որպես կանոն, ընդունվում է գրավոր՝ որոշման, հրամանի, կարգադրության կամ օրենքով նախատեսված այլ, տվյալ դեպքում՝ փորձաքննական եզրակացության ձևով), որը վարչական մարմինն ընդունում է հանրային իրավունքի բնագավառում որոշակի գործի կարգավորման նպատակով և ուղղված է անձի համար իրավունք ճանաչելուն: Դրական փորձաքննական եզրակացություն տրամադրելուց հետո գործարարական գործունեություն իրականացնողը պարտավոր է գործել նաև փորձաքննական եզրակացության հիման վրա, որն ավելի որոշակիորեն է կարգավորում նախաձեռնողի վարքագիծը՝ ապահովելով էկոլոգիական օրենսդրության պահանջներին համապատասխանող գործելակերպի դրսևորում: *Փորձաքննական եզրակացության բացակայության կամ բացասական փորձաքննական եզրակացության առկայության դեպքում որոշակի ոլորտներում գործարարական գործունեություն չի կարող իրականացվել:*

2. Փորձաքննական եզրակացությունն ընդունվում է ՇՄԱՓ գործընթացի արդյունքում, որը վարչական վարույթ է:

¹ Ընդունվել է 18.02.2004 թ., ուժի մեջ է մտել 31.12.2004 թ., ՀՀՊՏ 2004.03.31/18(317), Հոդվ. 413:

ՎՀՎՎ-ի մասին օրենքի համաձայն՝ վարչական վարույթը վարչական մարմնի՝ վարչական ակտ ընդունելուն ուղղված գործունեություն է: Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունները կարող են սահմանվել օրենքներով և ՀՀ միջազգային պայմանագրերով (ՎՀՎՎ-ի մասին օրենքի 2-րդ և 19-րդ հոդվածներ):

3. Փորձաքննական եզրակացությունը ներկայումս չի ընդունվում ՎՀՎՎ-ի մասին ՀՀ օրենքի վարչական ակտին վերաբերող ձևական պահանջներին համապատասխան, որի հետևանքով այն դեռևս չի ընկալվում որպես այդպիսին:

Փորձաքննական եզրակացությանը վարչական ակտի կարգավիճակ տալու մասին մեր առաջարկը կարող է համարվել վիճահարույց՝ մոտեցման արմատական փոփոխության պատճառով: Սակայն գործնական ոլորտի հետագա կատարելագործումը ապացուցելու է մեր մոտեցման անհերքելիությունը:

Օրենսդրության կատարելագործման առաջարկվող ուղղություններ:

Էկոլոգիական գնահատման համակարգի կատարելագործումը Հայաստանում ենթադրում է առաջին հերթին իրավական կարգավորման քարտեփոխում հետևյալ ուղղություններով.

1. ՇՄԱՓ և ՇՄԱԳ ընթացակարգերի հարաբերակցության ճշգրտում,

2. գործունեության տեսակների դասակարգում կատեգորիաների՝ ըստ ազդեցության աստիճանի,

3. փորձաքննության սկզբունքների ամրագրում և փուլերի տարանջատում,

4. հասարակության մասնակցության ընթացակարգերի հնարավորինս պարզեցում՝ անհրաժեշտ երաշխիքների ամրագրմամբ,

5. փորձաքննության եզրակացության իրավական կարգավիճակի որոշակիացում,

6. նախատեսվող որոշակի տեսակի գործունեության, անդրսահմանային ազդեցություն ունեցող գործունեության (ՇՄԱԳ ընթացակարգ) ու պլանների, ծրագրերի ու քաղաքականության (ՌԷԳ ընթացակարգ) փորձաքննության ընթացակարգերի տարբերակված և միասնականացված իրավական կարգավորման ապահովում,

7. պատասխանատվության միջոցների նախատեսում:

Գործնական իրավիճակի վերլուծություն

Հաճախ, որոշ դեպքերում մաս անհիմն, ՀՀ-ում գործող իրավական ակտերի բացերը և հակասությունները մատնանշվում են որպես իրավակիրառ գործունեության ցածր մակարդակի պատճառ՝ չանդրադառնալով գործնականում գոյություն ունեցող բազմաթիվ այլ խնդիրների: Մինչդեռ գործնական իրավիճակների վերլուծությունից պարզ է դառնում, որ իրավական կարգադրագրերից շեղումները ոչ միշտ են պայմանավորված դրանց անկատարությամբ: Օրինակ՝ Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը շահագործման տրամադրելու նպատակով անցակցված ՇՄԱՓ գործընթացի ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանելու հետևյալ շեղումները.

- ✓ նախատեսվող մեկ գործունեության համար երկու փորձաքննական եզրակացության (ԲՓ 31, ԲՓ 135) տրամադրում,

- ✓ յուրաքանչյուր շրջանի համար օրենքով նախատեսված 3 հանրային լսման փոխարեն փորձաքննության երկու շրջանի համար երկու հանրային լսման անցկացում,

- ✓ փորձաքննական եզրակացության մեջ ազդեցությունների կանխարգելման, նվազեցման կամ բացառման հստակ մեխանիզմների կամ ՇՄԱՓ նախագծում ամրագրված միջոցների՝ օրենսդրության պահանջներից համապատասխանության ստուգման բացակայություն,

- ✓ հասարակության ոչ պատշաճ իրազեկում:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետությունում գրեթե ձևական բնույթ կրող ՇՄԱՓ գործընթացը ընդունվող որոշումների բովանդակության վրա իրապես ազդող մեխանիզմի վերածելու ճանապարհին անհրաժեշտ է նախ՝ գիտական չափանիշների հիման վրա վերանայել էկոլոգիական ռիսկերի գնահատման օրենսդրական կարգավորման ամբողջ համակարգը (ներառյալ՝ իրավական պատասխանատվության միջոցների նախատեսում), երկրորդ՝ հետևողական գործելակերպով, պատշաճ մասնագիտական պատրաստվածություն ունեցող սուբյեկտների ներգրավմամբ գործնականում ապահովել իրավական նորմերի իրացում:

Gor Movsisyan

PhD student of the Chair of Civil procedure, YSU

**THE ADVANCED DIRECTIONS OF THE DEVELOPMENT OF
STATE ENVIRONMENTAL EXPERTISE IN THE
REPUBLIC OF ARMENIA**

In the article dedicated to core function of state management of nature resources the author argues main directions of its progress: harmonization of interaction between environmental impact assessment and environmental impact expertise, the establishment of sufficient guaranties to ensure effective public participation, the clarification of the legal statues of expertise conclusion.

By analyzing the main issues author concludes the necessity to develop environmental risk assessment system maintaining effectiveness of legislation by consistent implementation.